# ԿՆՈՋ ՎՐԱ ՁԵՌՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԸ ԱՐԳԵԼՎԱԾ Է ԻՍԼԱՄՈՒՄ

[ Հայերեն - Armenian – أرميني ]


ԱՀՄԵԴ ԱԼ- ԱՄԻՐ

ՑԵԿՈՐԱ ՎԻՎԻԱՆ

**Թարգմանությունը:**
**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)**
& Աննա Ռ. Հակոբ
**Ստուգող հանձնաժողով:**
Աբու Առամ



2015 - 1436

IslamHouse.com

# ﴿ تحريم ضرب النساء في الإسلام ﴾

باللغة الأرمينية

أحمد الأمير & تساكورا فيفيان

ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& آنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

2015 - 1436

IslamHouse.com

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ փառքը Ալլահինն է, աշխարհների Տիրոջը, Ով ուղարկեց Մուհամեդին (Խ.Ա.Ո.Ն) որպես մարգարե ավետիսի և զգուշացման, ինչպես նաև կոչ ամբողջ աշխարհին, կոչ դեպի Ալլահի Ուղի և վառ լույսը: Թող Ալլահի օրհնությունը և խաղաղությունը լինի նրան, նրա ընտանիքին և նրա ուղեկցորդներին :

Այս գիրքը պատասխան է նրանց, ում խաբում և շեղում է Սատանան: Իսլամում, կնոջ վրա ձեռք բարձրացնելու խնդիրը, քննարկվել է շատ ժողովներում և գոյություն ունեն շատ կայքեր, որոնք ուղղված են այս խնդրին: Իսլամի որոշ թշնամիներ անգիտակցաբար և առանց ըմբռնման, անարդար ձևով ստեր են հորինում : Նրանք հորինում են խոսքեր, որոնք չունեն իմաստ կամ հիմք, նրանք ամբողջովին անհիմն են : Ուստի, ես կցանականայի առաքինի ընթերցողին տալ Իսլամի վերաբերմունքը կնոջ վրա ձեռք բարձրացնելուն և դրա տարբերակումը այլ կրոնների վերաբերմունքի հետ, քանի որ Իսլամը միակ կրոնն է, որը արգելում է կնոջ վրա ձեռք բարձրացնելը, լինի նա երիտասարդ, թե տարեց: Այսպիսիով, ես կներկայացնեմ ձեզ խնդրի մանրամասները և դուք կարող եք դատել, այն բանից հետո, երբ դուք կիմանաք և կընկալեք խնդիրը :

Հեղինակ

# ԳԼՈՒԽ 1.

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԸՍՏ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ (ՇԱՐԻԱԹԻ)

Ըստ Իսլամական օրենքի, մարդկային բոլոր գործողությունները բաժանվում են հետևյալ դասակարգումների, որպեսզի պարզաբանեն գործողության թույլատրելիությունը և արգելքը.

1.**ՊԱՐՏԱԴԻՐ** (Ֆարդ) .Իսլամական օրենքը սահմանում է այն մարդկանց համար, առանց որևէ կասկածների: Այդպիսի սահմանումներից են պարտադիր աղոթքը, պահքը, կամ Զաքյաթը (տարեկան պարտադիր բարեգործությունը), որը հարուստը տալիս է աղքատին: Այս գործողությունները պարտադիր են և նա, ով հետևում է,պարգևատրվում է մինչ դեռ նա, ով անտեսում է, պատժվում է:

2.**ԳԵՐԱԴԱՍԵԼԻ** (Մուստահաբ). Իսլամական օրենքը խրախուսում է այսպիսի գործողությունները, առանց որևէ պարտադրանքի : Դրան,հետևող անձը պարգևատրվում է, սակայն նա, ով անտեսում է, մեղք չի գործում, ուստի և չի պատժվում: Այսպիսի գործողություններից են աղոթքից առաջ Սիվակով (խոզանակի նման փայտե կտոր), ատամները մաքրելը:

3.**ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ** (Մուբահ). Այսպիսի գործողությունների համար անձը ոչ պատիժ է կրում, ոչ էլ պարգևատրվում է: Դրանց թվին են պատկանում

մեքենա կամ ինքնաթիռ վարելը, ինչպես նաև այլ ամենօրյա գործողությունները:

4.**ՆՈՂԿԱԼԻ** (Մակրուհ). Այդ ժուժկալության գործողություններ են, որոնք խրախուսում է Իսլամական Օրենքը և որոնք չունեն որևէ արգելք: Այսպիսով, ով հետևում է, պարգևատրվում է, իսկ ով չի հետևում պատիժ չի կրում և չի համարվում մեղսագործ: Գերադասելի է խուսափել այս գործողություններից և այն ամենից, ինչը տանում է դրան: Սակայն նա, ով հետևում է այդպիսի գործողություններին, մեղք չի գործում: Միևնույն ժամանակ այս գործողությունների պարբերաբար կրկնությունը և սովորությունը տանում է Ալլահի սահմանների ոտնահարմանը և արգելված գործողությանը: Թաքնված պատճառը այն է, որ այսպիսի գործողությունները մեղք չեն համարվում, նույնիսկ եթե դրանք նողկալի են, որովհետև, երբեմն դրանք անհրաժեշտ են: Օրինակ, Ամենազոր Ալլահը ատում է ամուսնալուծությունը, սակայն չի արգելում այն, որպես գթասրտություն Իր ստրուկներին, ազատելու նրանց, եթե կյանքի պայմանները են այդ պահանջում:

5.**ԱՐԳԵԼՎԱԾ** (Հարամ) .Այս գործողությունները արգելել է Իսլամական Օրենքը: Այսպիսով, այն անձը, ով գործել է այն, համարվում է մեղսագործ և պատժվում է:Մինչ նա, ով խուսափել է, պարգևատրվում է: Այս գործողություններից են ոգելից խմիչքները և անբարոյականությունը :

## ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻԻ և ԱՐԳԵԼՎԱԾԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թույլատրելիի իմացությունը և տարբերակումը արգելվածից, համարվում է Իսլամի ողնաշարը և հավատքի ապացույցը, որը կապված է սրտի, այլ ոչ թե մարմնական արարքների հետ: Հիմնական կանոնը այն է, որ յուրաքանչյուր արարք թույլատրելի է և գոյություն չունի ոչինչ անթույլատրելի, բացառությամբ նրանց, որոնք նշվել են Ղուրանում և Մարգարե Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) Սուննայում, որպես արգելված: Թույլատրելի արարքները անբիծ և լավն են, մինչդեռ արգելվածները չարիք են, անպարկեշտ: Եվ Ալլահի Իրավունքն է, քանի որ Նա Արարիչն է, Բարիք Գործողը և Իր ստրուկների գործերի Տնօրինողը, թույլատրել ինչ Նա է ցանկանում Իր ստրուկներին և արգելել ինչ Նա է ցանկանում: Սակայն, Ալլահը ելնելով Իր գթասրտությունից դեպի Իր ստրուկները, օրինականացրել և արգելել է արարքներ ելնելով տրամաբանական պատճառներից, որոնց հիմքում ընկած են մարդկանց շահերը: Ուստի Ալլահը թույլատրել է միայն բարիք և արգելել է միայն չարիքը:

## ԱՐԱՐՔԸ, ՄԵԿ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԻՑ ՄՅՈՒՍԸ ՓՈԽԵԼԸ

1. Թույլատրելի արարքը անթույլատրելի դարձնելը և հակառակը.

Թույլատրելի արարքը կարելի է դասել անթույլատրելիի կարգին, եթե գոյություն ունի պատճառ, որը այս արարքը հոգուն հաճույք և բարիք պատճառելու փոխարեն տալիս է վատություն և նողկալիություն, որը վնաս է հոգուն: Օրինակ, փողոցով զբոսնելը թույլատրելի է, սակայն հնարավոր է, որ այն արգելվի, եթե երկրի նախագահը քաղաքացիների ապահովության համար պարետային ժամ հայտարարի:

Անթույլատրելի արարքը կարելի է դասել թույլատրելիի կարգին, եթե գոյություն ունի պատճառ, որը այս արարքը դարձնում է անհրաժեշտ մարդու կյանքի համար : Օրինակ, ոգելից խմիչքը արգելված արարք է, սակայն այն կարող է լինել թույլատրելի, եթե մարդը կորել է անապատում և մահանում է ծարավից, քանի որ չկա ոչինչ ըմպելու, բացառությամբ ոգելից խմիչքի, և այս դեպքում նա կարող է ըմպել այնքան, որքան անհրաժետ է, գոյությունը պահպանելու համար, իհարկե, առանց, ոտնահարելու իր սահմանները :

2. ՊԱՐՏԱԴԻՐ ԱՐԱՐՔԸ ԱՐԳԵԼՎԱԾ ԴԻՐԱՁՆԵԼԸ և ՀԱԿԱՌԱԿԸ

Պարտադիր արարքը կարող է դառնալ արգելված և արգելվածը կարող է դառնալ պարտադիր : Օրինակ,

աղոթքը պարտադիր արարք է, սակայն այն կարող է դառնալ արգելված, եթե մարդը աղոթում է իր տանը երկրաշարժի ժամանակ և ակնհայտ է, որ կմահանա, եթե տանից արագ դուրս չգա: Մյուս կողմից, հարձակվել մարդու վրա և ոտքը կտրելը արգելված է, սակայն, եթե բժիշկը ստիպված է կտրել հիվանդի ոտքը, որպեսզի փրկի նրա կյանքը, ապա, այս արարքը դառնում է պարտադիր և եթե նա այդ չանի, կհամարվի որ նա մեղք է գործել, որի համար նա պետք է պատիժ կրի :

3.ՆՈՂԿԱԼԻՑ ԳԵՐԱԴԱՍԵԼԻ ԴԱՌՆԵԼԸ ԿԱՄ ԳԵՐԱԴԱՍԵԼԻՑ ԱՐԳԵԼՎԱԾԻ ԴԱՍԱԿԱՐԳ ԴԱՍԵԼԸ

Նողկալի արարքը կարող է դասվել գերադասելիի դասակարգին, նույնիսկ եթե այն պարտադիր է: Օրինակ, ամուսնալուծությունը իր էությամբ նողկալի արարք է, որը Ալլահը ատում է, սակայն որոշ դեպքերում ամուսնալուծությունից հրաժարվելը կարող է առաջնորդել արգելված արարքների, որոնք ամուսինը չի կարող կանխել, եթե չամուսնալուծվի, օրինակ, եթե կինը թեթևաբարո է և ամուսինը չի կարող նրան բերել ճիշտ ուղղու: Այս դեպքում, գերադասելի է, որ ամուսինը այսպիսի կնոջից ամուսնալուծվի: Հետևաբար, նողկալի արարքը դառնում է գերադասելի :

Գերադասելի արարքը նույնպես կարող է դասվել արգելվածի դասակարգին: Օրինակ, Աս-Սիվակով

ատամներ մաքրելը գերադասելի է: Սակայն այն կարող է դառնալ նողկալի, նույնիսկ արգելված, երբ, օրինակ ատամները թափվում են և մարդը տեղյակ է, որ այն տեղի կունենա Աս-Սիվակի գործածման դեպքում: Այս դեպքում Աս- Սիվակով ատամներ մաքրելը հակասում է Իսլամական ՛ չվնասել, կամ որևէ մեկին վնաս չպատճառել, նույնսիկ ինքդ քեզ՛ կանոնին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով վերոհիշյալ օրինակներին, մենք եզրակացնում ենք, որ Իսլամը կույր կրոն չէ, որը չի տեսնում կամ անտեսում մարդկանց ամենօրյա արարքների պատճառները: Կուրությունը, փաստորեն Իսլամի թշնամիների սրտերում է, ովքեր չունեն մեկ այլ նպատակ, բացի ստերից, որոնք նրանք հորինում են ընդդեմ Իսլամի, հանգցնելու Ալլահի Լույսը իրենց բերաններով, սակայն իրավմամբ, Ալլահը կատարյալ կդարձնի Իր Լույսը, նույնիսկ, եթե անհավատները դեմ լինեն դրան: Միգուցե, սիրելի ընթերցող, դուք հասկացաք, որ Իսլամը անարդարության կրոն է, սակայն հակառակը, քանի որ Ալլահի Ածականներից մեկը «Ալ-Ադլ» «Արդար» - է, արարքի արգելված կամ թույլատրելի լինելու գնահատականը Իսլամում, հիմնված է արդարության վրա, այլ ոչ թե կույր դատումների, քանի որ անարդարության յուրաքանչյուր ձև արգելված է Իսլամում:

# ԳԼՈՒԽ 2

## ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՍՈՒՐԲ ՂՈՒՐԱՆԻ և ՍՈՒՆՆԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ղուրանի Տարբերակների լույսի ներքո, մենք տեսնում ենք, որ Ալլահը, Ամենաբարձրյալը, պատվիրել է կնոջ նկատմամաբ հոյակապ վերաբերմունք, նրա նկատմամբ առաքինություն և լավագույն կենակցությունը, նույնիսկ, եթե գոյություն չունի սրտանց սեր: Ալլահը, Ամենաիմաստունը ասաց.

**«Եվ, ապրեք նրանց հետ լավագույն ձևով: Եթե դուք չեք հավանում նրանց, կարող է լինել, որ դուք չեք հավանում մի բան, որի միջոցով Ալլահը մեծ բարիք է բերում:»** (4:19)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«Հավատացյալ տղամարդը չպետք է ատի իր կնոջը, հավատացյալ կնոջը, եթե նա,նրա բնորոշումներից որևէ բան չի հավանում, նա պետք է գոհանա մեկ այլ բանով** :» (Մուսլիմ)

Նույնպես, Ալլահը պարզաբանում է, որ կինը ունի իրավունքներ ամուսնու հանդեպ, ինչպես ամուսինը : Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

**«Եվ նրանք, կանայք ունեն իրավունքներ իրենց ամուսինների նկատմամբ, համահավասար, իրենց**

**ամուսինների, իրենց նկատմամբ, որը ողջամիտ է:»** (2:228)

Եվ, Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) վերջին կամքն էր մահից առաջ, որ տղամարդիկ հոգ տանեն իրենց կանանց և պատվեն նրանց և երբեք անարդար չվերաբերվեն նրանց, ոչ էլ ոտնահարեն նրանց իրավունքները: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«**Վերաբերվեք կանանց լավագույն ձևով**:»

Եվ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատվիրեց տղամարդկանց լավ վերաբերվել իրենց կանանց և լինել առաքինի նրանց նկատմամբ: Նա նույնպես պարզաբանեց, որ տղամարդկանցից լավագույնը նա է, ով լավագույնն է իր կնոջը նկատմամբ : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«**Հավատքում ամենակատարյալը, լավագույնն է բնույթով: Եվ ձեզանից լավագույնը նա է, ով լավագույնն է իր կնոջ նկատմամբ** :» (Ատ- Թիրմիզի)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

«**Ձեզանից լավագույնը նա է, ով լավագույնն է իր կնոջ նկատմամբ և ես լավագույն եմ իմ կանանց նկատմամբ**:» (Իբն Մաջահ)

Նույնպես Մարգարեն պատվիրեց իր ուղեկցորդներին հանդուրժել իրենց կանանց սխալները, բացատրելով

կնոջ բնույթը, որով Ալլահը արարել է նրան: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց.

«**Վերաբերեք կնոջը լավագույն ձևով: Իրոք, կինը արարվել է կողոսկրից և կողոսկրի ամենաթեք մասը վերին հատվածն է, եթե դուք փորձեք ուղղել այն, կկոտրվի և, եթե դուք թողնեք այն, ապա կմնա թեք, այսպիսով, վերաբերեք կնոջը լավագույնս**:» (Ալ-Բուխարի)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

«**Իրոք, կինը արարվել է կողոսկրից: Ամեն դեպքում այն չի կարող ուղղվել, այսինքն, նա չի գործի այնպես, ինչպես դուք եք ցանկանում: Ուստի, եթե դուք հավանում եք նրան, դուք պետք է հավանեք նրա թեքությունը: Եվ, եթե դուք փորձեք ուղղել նրան, դուք կկոտրեք : Եվ, կոտրել նրան նշանակում է ամուսնալուծվել**:» (Մուստակիրաջ Աբի Աուանա)

Սուրբ Ղուրանի տարբերակները և Հադիթները ցույց են տալիս, որ տղամարդը պետք է վերաբերի իր կնոջը լավագույնս և անհամար և ով ցանկանում է անրադառնալ նրանց, նա կարող է նույնպես այդպես անել:

## ԱՐԴՅՈ՞Ք ԱԼԼԱՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ (Խ.Ա.Ո.Ն) ԵՐԲևԷ ՁԵՌՔ Է ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԻՐ ԿԱՆԱՆՑԻՑ ՈՐևԷ ՄԵԿԻՆ

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) լավագույն օրինակն է, ում բոլոր մահմեդականները պետք է հետևեն, այնպես ինչպես նրանց պատվիրել է Ամենաբարձրյալ Ալլահը: Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

**«Իրավմամբ,հանձինս Ալլահի Մարգարեյի, Մուհամմեդի դուք ունեք լավ օրինակ հետևելու, ովքեր հույս ունեն հանդիպելու Ալլահին և Վերջին օրվան և շատ են հիշատակում են Ալլահին**:» (33:21)

Ամենաբարձրյալ Ալլահը Ղուրանում նույնպես նկարագրում է առաքինի Մարգարեյի բարքերը ասելով.

**« Եվ, իրոք, դու, օվ Մուհամմեդ, բնույթի բարձր չափանիշ ես**:» (68:4)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) իրագործում էր իր բարքերը, որից մարդիկ սովորում էին, թե ինչպես վերաբերել մյուսներին : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«Իրոք, ինձ ուղարկել են կատարելագործելու և կատարյալ դարձնելու լավագույն էթիկետը**:» (Մալիք ին Ալ- Մուաթա)

Արդյո՞ք մենք գտել ենք Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կենսագրականում կամ հադիթում որևէ բան, որը ցույց է տալիս, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)երբևէ հարվածել է որևէ կնոջ կամ երեխայի: Կամ արդյո՞ք մենք գտնում ենք նրա թշնամիների խոսքերում, ովքեր նրա

ժամանակակիցներն են եղել, տեսել և լսել են նրան, որևէ բողոք, որը մեղադրում էր նրան այդպիսի բանում ։

Եվ եկեք հետևենք Աիշային, Մարգարեի կնոջը և թե ինչ էր նա ասում նրա մասին մահից հետո, որպեսզի տեղեկանանք, թե ինչպիսի ամուսին էր նա.

«**Նրա բնույթը Ղուրանն էր**։» (Ահմեդ)

«**Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)երբեք չէր հարվածել իր ձեռքով կնոջ կամ երեխայի**։» (Մուսլիմ)

Եվ, եկեք տեսնենք, թե Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) մյուս կինը Սաֆիյան ինչ է ասել մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) մասին, նրա մահից հետո.

«**Երբեք ես ոչ մեկին չեմ տեսել ավելի լավ բնույթով, քան Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)** » (Ատ-Տաբարանի)

Եկեք տեսնենք, թե ինչ է ասել Մարգարեի ծառան Անաս իբն Մալիքը

«**Ես ծառայեցի Ալլահի Մարգարեին (Խ.Ա.Ո.Ն) տաս տարի ։ Նա երբեք չասաց ինձ նույնիսկ ՛օֆ՛։ Երբ ես ինչ որ բան էի անում, նա երբեք ինձ չէր հարցնում, թե ինչու ես այդպես արեցի։ Երբ ես չէի անում որևէ հանձնարարություն, Նա երբեք ինձ չէր հարցնում, թե ինչու ես չեմ արել այդ։ Եվ, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ուներ լավագույն բնավորությունը բոլոր մարդկանցից։ Եվ ուներ լավագույն գծերը, որ ես երբեք**

**չեմ զգացել մետաքսե հագուստի, ոչ էլ մաքուր մետաքսի, ոչ էլ որևէ ուրիշ փափուկ բան, քան Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)ձեռքի ափը: Ոչ էլ ես զգացել եմ մսքը կամ ուրիշ բույր ավելի քաղցր, քան Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) քրտինքի բույրը** :» (Ատ-Թիրմիզի)

Անաս իբն Մալիքը նույնպես ասաց. «**Ես ծառայեցի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) տարիներ: Նա երբեք ինձ չի նեղացրել, երբեք չի հարվածել, երբեք չի բղավել և չի խոժոռվել : Եվ, երբեք չի պախարակել ինձ որևէ բանի համար, որ նա պատվիրել է և ես չեմ լսել: Եվ, եթե որևէ մեկը նրա ընտանիքից պախարակում էր ինձ, նա ասում էր .«Հանգիստ թողեք նրան:Եթե այդ պետք է կատարվեր, ապա այդ կկատարվեր**:»»(Ալ-Բազհաուի)

IslamHouse.com

## ԳԼՈՒԽ 3

## ԿՆՈՋ ՎՐԱ ՁԵՌՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴՐՈՒՅԹԸ
## ԱՐԴՅՈ՞Ք ԱՅՆ ԱՐԳԵԼՎԱԾ ԿԱՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ԻՍԼԱՄՈՒՄ

Իսլամական օրենքի աղբյուրները Սուրբ Ղուրանի տարբերակներն են և Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) սուննան և հիմնվելով այս երկուսի վրա, մենք հասնում ենք Իսլամի դատապարտմանը, որը կապված է կնոջը հարվածելուն և ըստ դրա, հարգելի ընթերցողը կարող է որոշել, թե որ գործողությունների դասակարգում կարելի է դասել այն: Այսինքն, պարտադիրի, գերադասելիի, թույլատրելիի, նողկալիի, թե արգելվածի:

Իյաս իբն Աբդ Ալլահն ասաց, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Մի հարվածեք կնոջը» այնուհետ, մեկ այլ ժամանակ, այն բանից հետո, երբ Մարգարեն արգելեց հարվածել կնոջը, Ումար իբն Ալ-Խատաբը եկավ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ ասելով. «Կանայք անցնում են իրենց տղամարդկանց, չեն հնազանդվում և վերաբերում են նրանց ամբարտավանորեն և վատ:» Ապա Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)նրանց թույլտվություն տվեց հարվածել նրանց, այսպիսի դեպքերը բացառություն դարձնելով: Դրանից հետո, շատ կանայք եկան Մարգարեյի կանանց մոտ, բողոքելով իրենց ամուսիններից: Եվ, այնուհետ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)

ասաց. «**Շատ կանայք եկան Մուհամմեդի կանանց մոտ բողոքելով իրենց ամուսիններից, այդ տղամարդիկ ձեր միջի լավագույնները չեն** :» (Աբու Դաուդ, Իբն Մաջահ, Ադ-Դարմի)

Վերլուծելով այս հադիթը, մենք կարող ենք եզրակացնել հետևյալը.

Այս Հադիթը,Մարգարեի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը, ներառում են նրա (Խ.Ա.Ո.Ն) տարբեր երեք ասածները, որոնք նա ասել է երեք տարբեր պարագաների համար, այլ որ թե մեկի :

## ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱԳԱՆ

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « **Մի հարվածեք կնոջը**» և այստեղ ավարտվում է առաջին դեպքը: Ուստի, ով լսում է այս խոսքերը Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն), հաստատուն գիտակցում է, որ կնոջը հարվածելու իսլամական տեսակետը արգելված է և ով անում է այդ համարվում է մեղսավոր, քանի որ նա ոտնահարում է Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հրամանը :

Ըստ վերոհիշյալի, ես ուղղում եմ իմ հարցը հարգելի ընթերցողին: Եթե դուք այնտեղ լինեյիք այդ ժամանակահատվածում և լսեյիք, որ Ալլահի Մարգարեն Խ.Ա.Ո.Ն ասաց «մի հարվածիր կնոջը» կարող եք դուք ասել, ըստ իսլամական օրենքի այն

պարտադիր, գերադասելի, թույլատրելի, նողկալի կամ արգելված է: Եվ արդյո՞ք դուք կհամարեք, որ ով այդպես արեց, կպարգևատրվի կամ կհամարվի մեղսագործ: Եվ, արդյո՞ք դուք կասեք, որ Իսլամը ճնշում է կնոջը և թույլատրում է հարվածել նրանց:

## ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱԳԱՆ

Այժմ, եկեք անցնենք հադիթի երկրորդ մասին, որտեղ ՛Ումար իբն Խատաբը եկավ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն)մոտ, նկատի ունենալով, որ այս տեղի ունեցավ մեկ այլ դեպքում, այն բանից հետո, երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

«Մի հարվածեք կնոջը » Ումարը եկավ բողոքելու կանանցից, ասելով. «Կանայք անցնում են իրենց տղամարդկանց, չեն հնազանդվում նրանց և վերաբերում են նրանց ամբարտավանորեն և վատ:» Այստեղ, և միայն այստեղ, որպես բացառություն, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հաշվի առնելով իրական կյանքի պայմանները, թույլատրեց հարվածել կնոջը, սակայն ՄԻԱՅՆ այս պարագայում : Սակայն, ինչպե՞ս պետք է այն լինի: Այս մենք կբացատրենք ավելի ուշ:

## ԵՐՐՈՐԴ ՊԱՐԱԳԱՆ

Այժմ, եկեք անցնենք հադիթի երրորդ մասին,այն բանից հետո, երբ շատ կանայք եկան Մարգարեյօի (Խ.Ա.Ո.Ն) կանանց մոտ բողոքելով իրենց ամուսիններից: Եվ, այնուհետ, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«Շատ կանայք եկան Մուհամմեդի կանանց մոտ բողոքելով իրենց ամուսիններից, այդ տղամարդիկ ձեր միջի լավագույնները չեն:»** Այստեղ ընկած է Իսլամում կնոջը հարվածելու վերջնական վճիռը, որ այն նողկալի կամ արգելված արարք է, եթե ամուսինը ոտնահարում է Ալլահի սահմանած չափերը, որը մենք կբացատրենք ավելի ուշ:

Արդյո՞ք դուք հասկացաք այս հադիթից, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) պատվիրեց որևէ մեկին հարվածել կնոջը: Կամ, արդյո՞ք նա խրախուսեց որևէ մեկին հարվածել կնոջը: Կամ արդյո՞ք նա հանդիմանում է որևէ մեկին, ով հարվածում է կնոջը: Մարգարեյի ուղեկցորդները սլացան ստանալու Նրա (Խ.Ա.Ո.Ն) գոհունակությունը : Եվ, այդ իսկ պատճառով, նրանք համոզված էին, որ նա, ով հարվածում է իր կնոջը նա չէ, ով ստանում է Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) գոհունակությունը, այլ հակառակը: Այսինքն, նա, ով չի հարվածում իր կնոջը և ներում է նրա սխալները, մեկն է, ով ստանում է Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) գոհունակությունը : Եվ, անկասկած, ցանկացած արարք, որ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ատում է, անցնում է նողկալիի շարքը, և նույնիսկ արգելվածի:

# ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՐՈՂ Է ԿՆՈՋ ՎՐԱ ՁԵՌՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԸ ԱՆՑՆԵԼ ՆՈՂԿԱԼԻԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՑ,ԱՐԳԵԼՎԱԾԸ

Մենք տեսանք, որ Իսլամում այս խնդրի հիմքը և առաջին վճիռը կապված այս գործողության հետ արգելված է: Այնուհետ, գործողությունը անցել է թույլատրելի արարքների շարքը որոշ պատճառներով և վերջապես, այն անցել է նողկալիի շարքը : Սակայն ե՞րբ կնոջը հարվածելը դարձավ արգելված: Այն արգելված արարք է, եթե այն անարդար ճնշում է, առանց որևէ պատճառի, քանի որ ամեն տեսակի անարդար ճնշումը Իլամում արգելված է: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց իր Իմաստուն Գրքում, զգուշացնելով ամեն տեսակի անարդարությունից.

**«Եվ, ով ձեզանից գործում է անարդարություն, այսինքն, Ալլահին մրցակիցներ է սահմանում, Մենք նրանց մեծ տանջանքի կենթարկենք**:» (25:19)

Ալլահն նույնպես ասաց.

**«Եվ անարդարությունը չի ունենա ոչ Ուալի, (Պաշտպան), Պահապան, ոչ էլ Աջակից**:» (42:8)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«Վախեցեք և ձեռնպահ մնացեք անարդարությունից և ճնշումից: Իրոք, անարդարությունը կվերածվի չափից դուրս խավարի Դատաստանի Օրը:»** (Ալ Բայհակի)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

**«Վախեցեք ճնշվողի աղաչանքից, քանի որ չկա քողարկում դրա և Ալլահի միջև:»** (Ալ- Բուխարի)

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

**« Վախեցեք ճնշվողի աղաչանքից, նույնիսկ եթե նա անհավատ է, քանի որ գոյություն չունի քողարկում դրա և Ալլահի միջև :»** (Ահմեդ)

Որպես լրացում, նշենք, որ Իսլամը ոչ միայն արգելել է վիրավորել կնոջը ֆիզիկապես, այլև նույնիսկ խոսքերով: Ամենաբարձրյալ Ալլահն ասաց.

**« Իրոք, նրանք,ովքեր մեղադրում են առաքինի կանանց, ովքեր երբեք նույնիսկ չեն մտածել իրենց առաքինությունը վիրավորող որևէ բանի մասին և լավ հավատացյալներ են, անիծված են այս և Հետագա Կյանքում և նրանց համար կլինի մեծ տանջանք:»** (24:23)

Ամենաբարձրյալ Ալլահը նույնպես ասաց.

**«Եվ, նրանք ովքեր անհանգստացնում են հավատացյալ տղամարդկանց և կանանց անարժան կերպով, նրանք իրենց վրա կրում են զրպարտության հանցանքը և պարզ մեղքը:»** (33:58)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նույնպես ասաց.

**«Մահմեդականը նա է, ում լեզվից և ձեռքերից մարդիկ ապահով են և հավատացյալը նա է, ում կողմից մարդկանց կյանքերը և ունեցվածքը ապահով են** :» (Ան-Նիսաա)

Եվ նկատի ունեցեք, որ նախորդ հադիթում, Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)ասաց, որ մարդիկ ապահով են մահմեդականի լեզվից և ձեռքերից: Նա չի ասում, որ մահմեդականներն են ապահով:

Ուստի նա, ով հայտնում է, որ Իսլամը խրախուսում է անարդարություն կամ կնոջը հարվածելը մեծ զրպարտություն և սուտ է հորինում :

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՃԻՌԸ ԿՆՈՋԸ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այժմ, եկեք դիտենք գործնական գործողությունները, որոնք վերաբերվում են այս խնդրին, ամենօրյա կյանքում, որպեսզի տեսնենք Իսլամական դատարանի վճիռը: Իսլամական դատարանները շատ լրջորեն են վերաբերվում այս խնդրին, պաշտպանելով կանանց իրավունքները և դատելով տղամարդկանց, ովքեր հարվածում են իրենց կանանց: Ահա մեկ օրինակ:

«Ռիյադ» թերթը, 2012թվականի դեկտեմբերի 12-ին հրապարակեց իր կայքում հետևյալ նորությունը.

«Սաուդյան Արաբիայի Ալ- Քատիֆ քաղաքի դատարանը դատապարտեց մի ամուսնու, ով հարվածել էր իր կնոջը հրապարակայնորեն 30 խարազանի, որպեսզի նա օրինակ հանդիսանա ցանկացած մեկյուրաքանչյուրին, ով կկատարի միևնույն գործողությունը հետագայում : Դատավորը նույնպես պատվիրեց տղամարդուն այցելել տասնօրյա սեմինարների հաստատություն, որը զբաղվում է ընտանեկան խնդիրներով, որպեսզի նա անցնի գրավոր քննություն, որի արդյունքը կկցվի գործին:»

Նմանապես, Իսլամական երկրների բոլոր դատարանները կշտամբում են ցանկացած տղամարդու, ով հարվածում է իր կնոջը : Ծիծաղելի փաստ է նաև այն, որ որոշ կանայք ունենալով այս առավելությունները վախեցնում և ահաբեկում են իրենց ամուսիններին: Երբ նրանք ցանկանում են վրեժխնդիր լինել որևէ բանի համար, նրանք թեթևակիորեն վնասում են իրենց և ապա կողծորեն հայտնում իշխանություններին, որ իրենց ամուսինները են այդ արել, չնայած տղամարդիկ անմեղ են :

Եզրակացությունը այն է, որ ոչ մի գիտակից մահմադական, ով հետևում է Իսլամի ուսմունքին, չի ընդունի որևէ անարդարությունը ընդդեմ իր կնոջ և որ Իսլամը, մեր կրոնը, ոչ ուսուցանում է մեզ, ոչ էլ

պատվիրում է անել այս: Հակառակը, Իսլամը արգելում է ամեն տեսակի անարդարությունները և պատվիրում է ներողամտություն, համբերություն, հանդուրժողականություն և չարիքի դիմակայությունը բարիքի: Եվ, մենք պետք է գիտակցենք, որ Իսլամը կնոջը հարվածելը չի համարում թույլատրելի արարք, սակայն գոյություն ունի բացառություն որոշ անհատական դեպքերի համար, որպեսզի այն լինի շատ հազվադեպ և հատուկ դեպքերում: Ավելին, այն ունի իր որոշ պայմանները, որպեսզի այդ հաճախ չկատարվի, այլ միայն հետապնդի որոշակի նպատակ, որն է օջախի պահպանումը և ընդհանրապես հասարակության մեջ բարոյականության պահպանումը :

## ԳԼՈՒԽ 4

# ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՆՈՋ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Հարց է ծագում

Արդյո՞ք ավելի լավ չէ, որ տղամարդը հորդորի իր կնոջը հարվածելու փոխարեն:

Իհարկե: Եվ, իրոք, այս է Ամենաիմաստուն Ալլահի Դատաստանը, Ով Իր Գրքում ասում է .

**«Ինչ վերաբրում է այն կանանց, ովքեր անհնազանդ են ամբարտավանորեն, հիվանդագին և ըմբոստությամբ, սկզբում հորդորեք նրանց, այնուհետ եթե նրանք պնդեն, հեռացեք անկողնուց, այսինքն, ետ շրջեք ձեր մեջքը և վերջապես հարվածեք նրանց, թեթևակիորեն, որպես վերջին լուծում, եթե դուք ստիպված եք, եթե նախորդ քայլերից ոչ մեկը արդյունք չի տվել: Սակայն, եթե նրանք հնազանդվեն ձեզ, մի փնտրեք նրանց դեմ որևէ բան, անհանգստություն: Իրոք, Ալլահը Ամենաբարձրյալը և Ամենամեծն է :»** (4:34)

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն)իր հրաժեշտի ուխտագնացության ժամանակ ասաց.

**«Վերաբերվեք ձեր կանանց լավագույն ձևով, նրանք նման են գերիների ձեր ձեռքերում, դուք ոչ մի իրավունք չունեք այլ կերպ վերաբերվել նրանց, քանի դեռ նրանք մեղավոր չեն բացահայտ անպարկեշտության մեջ և,**

**եթե նրանք այդպես են անում, ապա շրջեք ձեր մեջքերը նրանց,անկողնում և հարվածեք նրանց թեթևակիորեն, աննկատելիորեն, սակայն, եթե նրանք հնազանդվեն ձեզ, ապա մի սխալվեք նրանց նկատմամբ,ամեն դեպքում : Իրոք, դուք ունեք իրավունքներ նրանց վրա և նրանք ունեն իրավունքներ ձեր վրա:**» (Ատ- Թիրմիզի)

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ալլահը, Ամենաիմաստունը, Ամենագիտակը տեղյակ է Իր ստրուկների գործերին, սահմանում է անպարկեշտ կնոջ խնդրի լուծումը երեք փուլերով որոնք են .

## ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ, ՀՈՐԴՈՐ և ՈՒՂՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Տղամարդու համար պարտադիր է հետևել ուղղորդության և հորդորի ուղղուն, լուծելու իր կնոջ հետ ունեցած խնդիրը, եթե նա տեսնում է անպարկեշտության նշաններ, մինչ նա իր մեջքը թեքում է կնոջից անկողնում: Ըստ շատ գիտնականների այս հաջորդականությունը պարտադիր է: Ուստի, տղամարդը պետք է փորձի հասնել կնոջ սրտին բարի խոսքերով, որի շնորհիվ նա կմեղմացնի նրա սիրտը, ստիպելով նրան զգալ, իր կարևորությունը տղամարդու սրտում և որ նա հորդորում է նրան, որովհետև նա ցանկանում է բարիք կնոջը և ամբողջ ընտանիքին :

Մասնավորապես տղամարդը պետք է իր ուժերի ներածին չափով անի ամենը, փորձելով հորդորել իր

կնոջը, որպեսզի ուղղի նրա վերաբերմունքը: Եվ, մենք պետք է հաշվի առնենք, որ հորդորը չպետք է բխի սառը սրտից կամ վատ ձևով, սակայն հորդորը նշանակում է բարություն զրույցում, որպեսզի գրավի մարդու սիրտը, օրինակ տղամարդը նվեր է տալիս կնոջը, այնպես որ նա ընդունում է նրա խոսքերը գոհունակ սրտով և բարի մտքով: Նույնպես, խելացի կնոջը համար պարտադիր է ընդունել հորդորը ամուսինու խոսքերից, հաշվի առնելով իրենց երեխաների և տան ապագան: Եվ, չնայած կինը անպարկեշտ և համառ է և ոչ հորդորը և ոչ էլ ուղղորդությունը արդյունավետ չեն, ապա ամուսինը կարող է փորձել երկրորդ փուլը, այնպես ինչպես Ալլահն է պատվիրել մեզ:

## ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ, ԱՆԿՈՂՆՈՒՄ ՄԵՋՔԸ ՇՐՋԵԼԸ

Ինչպես մենք բացատրել ենք, եթե հորդորը արդյունք չունի և կինը չի ընդունում այն կամ ուղղորդությունը, ապա թույլատրվում է նրա ամուսնուն շրջել իր մեջքը անկողնում, մերժելով նրան սեռական հարաբերությունը ամենաշատը երեք օր, քանի որ եթե նա շարունակի այդպես ավելի քան երեք օր, ապա ստացվում է որ նա ոտնահարում է կնոջ զգացմունքները, այլ ոչ թե ուղղում է նրան : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց.

**«Անթույլատրելի է մահմեդականին խռով մնալ իր եղբորից երեք օրից ավել, մեկը շրջվում է մեկ կողմ և մյուսը այլ կողմ, երբ հանդիպում են, երկուսից լավագույնը նա է, ով առաջինն է ողջունում մյուսին:»** (Բուխարի)

Կնոջից մեջք շրջելու նպատակն է, որպեսզի կինը զգա, որ ամուսինը իրոք տխրել է նրա վերաբերմունքից: Այս լուծումը նույնպես համարվում է երկրորդ հնարավորություն կնոջ համար, որպեսզի նա կարողանա մտածել ամենի շուրջ:

Սակայն, եթե կինը մտածում է ամենի շուրջ և որոշում է դադարեցնել իր անպարկեշտ վերաբերմունքը և վերադառնալ բարի բարքերին, ապա ամուսնու պարտավորությունն է դադարել շրջվել կնոջից, ներել նրան և լավ վերաբերմունք ցուցաբերել: Սակայն, եթե նա պնդի իր համառությունը և ամբարտավանությունը և արհամարհի ուղղորդությունը և նրա ամուսինը այլևս չի գտնում մեկ այլ լուծում, ապա նա կարող է գործի դնել իր վերջնական ձեռնարկումը:

## ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ՍԻՎԱԿՈՎ ԱՆՆԿԱՏԵԼԻ ՀԱՐՎԱԾԵԼԸ

Եթե տղամարդը փորձել է ուղղել կնոջ անպարկեշտ վերաբերմունքը հորդորներով, բարի խոսքերով և նվերներով, սակայն ոչ մեկը արդյունավետ չեն եղել և

այնուհետ նա փորձել է շրջել իր մեջքը անկողնում և այս էլ կրկին արդյունք չի տվել, ապա նրան թույլատրվում է աննկատելի հարվածել կնոջը Միվակով ։

«Աթաա»-ն ասաց. «Ես հարցրեցի իբն Աբբասին, թե որն է աննկատելի հարվածելը:» Նա ասաց. «Միվակով և դրան նմանատիպ որևէ բանով:» Ավելին, Ալ-Հասան Ալ-Բասրին ասաց. «Լինել աննկատ:»

Ի՞նչ ցավ կարող է պատճառել Միվակը, հարգելի ընթերցող: Եվ, արդյո՞ք դուք կարող եք կոչել կնոջը Միվակով հարվածելը ընտանեկան բռնություն ։ Ահա Միվակի նկարը, որի չափը հավասար է մատիտի չափի, այնպես, որ Իսլամում հարվածել բառի իմաստը հասկանալի լինի ։

Եթե, հարգելի ընթերցող, դուք կնոջը Միվակով հարվածելը համարում եք ընտանեկան բռնություն, ապա տեսեք թե որքան հոլիվուդյան ֆիլմեր են պատկերում վեճեր տղամարդկանց, կամ կանանց ու տղամարդկանց միջև, կամ գործատուի և աշխատողի, միջև, որտեղ մեկը իր ցուցամատը դնում է մյուսի կրծքին, սարսափեցնելով կամ հարվածելով, կամ իր ձեռքի մատիտով: Եվ շատ այլ դեպքերում, տղամարդը ապտակում է մյուսին: Ավելին, շատ ֆիլմերում կինը վեճի ընթացքում ապտակ է ստանում ամուսնուց և այնուհետ նա հեռանում է: Եվ արևմուտքի մարդիկ չեն համարում այս դեպքերը ընտանեկան բռնություն, նրանք կարծում են, որ զգացմունքներն են

առաջնորդում տղամարդուն հարվածել կնոջը և հակառակը: Նրանք կարծում են որ ամուսինը և կինը քաղաքակիրթ մարդիկ են: Եվ, այստեղ, մենք պետք է հաշվի առնենք, որ նույնիսկ ապտակելը արգելված է Իսլամում: Սակայն, նրանք հարձակում են գործում Իսլամի վրա և կեղծորեն մեղադրում են բռնության խրախուսման մեջ : Խնդրում ենք նշեք, որ հորդորի փուլերը, ամուսնու մեջք շրջելը անկողնում և նրան հարվածելը ամենօրյա ամուսնական խնդիրների լուծում չեն, սակայն, դրանք վերաբերում են կնոջ անպարկեշտ և ամբարտավան վերաբերմունքի խնդրին:

Օրինակ, եթե տղամարդը խնդրում է կնոջը եփել բրինձ և ձուկ, սակայն նա մոռանում է և պատրաստում է բրինձ և հավ դրա փոխարեն, կարո՞ղ ենք մենք ասել, որ վերոհիշյալ երեք փուլերը, հորդորը, մեջք շրջելը և թեթևակի հարվածելը պետք է գործածել այս պարագայում:

Իհարկե ոչ: Այս ամենը փոքրիկ բաներ են, որոնք պետք է անցնեն խաղաղ կերպով, առանց նույնիսկ հորդորի: Սակայն, եթե կինը անպարկեշտ է, համառ և նրա ամուսինը նկատում է անպարկեշտության նշաններ, անհնազանդություն և ամբարտավանություն, որոնք լուրջ խնդիրներ են, ապա մենք կանգնած ենք մի կնոջ առջև, ով կարիք ունի վերաբերմունքի ուղղման, առաջնորդության և խնդրի լուծման: Պատկերացրեք հարգելի ընթերցող, այս կինը շարունակում է իր համառ

ամբարտավանությունը և անպարկեշտ վերաբերմունքը, որը անկասկած արդյունք կդառնա նրա տան կործանմանը և ամուսնալուծությանը, մինչդեռ նրա ամուսինը ամեն ինչ արել էր երկար ժամանակ գործածելով հորդորի և ուղղորդության և մեջք շրջելու փուլերը, սակայն կինը ոչ մեկին չի պատասխանել: Ո՞րն է ավելի լավ և ավելի քիչ ցավոտ այս պարագայում, ամուսնալուծությունը, թե թեթևակի հարվածելը: Եթե նրան հարվածելը նման է մեկ աչքանու և ամուսնալուծությունը կուրության, ապա մեկ աչքը ավելի լավ է քան կույրը:Եվ, իրոք, կնոջը այսպիսի վարքով թողնելը կտանի ամբողջ ընտանիքի կործանման և իհարկե, որպես հետևանք, ամբողջ հասարակության կործանման:

## ԳԼՈՒԽ 5

## «ՀԱՐՎԱԾԵԼ» ԲԱՌԻ ԻՄԱՍՏԸ ԻՍԼԱՄՈՒՄ

